

Է. Ղազարյանը մասնակցել է չեխ դիվանագետի հետ ՀՀ փոխվարչապետի հանդիպմանը

16.02.2014

ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարար Արմեն Գևորգյանը 2014 թվականի փետրվարի 14-ին ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Չեխիայի Հանրապետության դեսպանության գործերի ժամանակավոր հավատարմատար Պետր Միկիսկային: Հանդիպմանը ներկա էին նաև ՀՀ Արմավիրի մարզպետ Աշոտ Ղահրամանյանը և ՀՀ Վայոց ձորի մարզպետ Էդգար Ղազարյանը: Քննարկվեցին Հայաստանի և Չեխիայի միջև ապակենտրոնացված մակարդակով համագործակցության զարգացման հարցեր: Նշվեց, որ երկու երկրները կարևորում են այս ձևաչափով փոխգործակցության խորացումը: ՀՀ Նախագահի՝ վերջերս Չեխիա կատարած այցի շրջանակում ստորագրվել են նաև գործընկեր տարածաշրջանների միջև համագործակցության համաձայնագրեր, որոնք, ըստ գրուցակիցների, լավ հիմք են ստեղծում ապակենտրոնացված փոխգործակցության հետագա խորացման համար: Փոխվարչապետը դրական գնահատեց Արմավիրի և Վայոց ձորի մարզերի համագործակցությունը Չեխիայի գործընկեր տարածաշրջանների հետ՝ նկատելով, որ միջտարածաշրջանային և միջհամայնքային կապերը նպաստում են ինչպես երկկողմ առևտրատնտեսական հարաբերությունների զարգացմանը, այնպես էլ բարեկամ ժողովուրդների միջև շփումների ակտիվացմանը: Մարզպետները ներկայացրեցին գործընկեր տարածաշրջանների հետ համագործակցության խորացման հնարավորություններն ու առաջիկա ծրագրերը: